Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան հիմնադրամ
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և
տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն

ՇՊՀ ԳՐԱԴԱՐԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
1/30/2023

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԴԱՐԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ

Թերեզա Խաչատրյան
ԳՈՒԳԽՆՏՏԿ-Ի ՏՆՕՐԵՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....3
ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ....5
ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ....7
ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ....10
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ....12
ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ....20
ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ....26
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆԴԱՄԱԿԱՑՈՒՄԸ «ՀԹԳԱ» ՀԿ-ԻՆ....32
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ....36
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ....53
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ, SHSU.AM ԿԱՅՔՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ....55
ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՇՊՀ» հիմնադրամի (այսուհետ՝ **համալսարան**) **«Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնի** (այսուհետ՝ Կենտրոն) գործառույթներն ավելին են, քան դասական գրադարաններինը, ինչը պայմանավորված է Կենտրոնի առաքելությամբ ու նպատակով:

2021-2022 ուստարում Կենտրոնի գործունեությունն աստիճանաբար սկսել է վերադառնալ իր բնականոն հունին՝ չնայած աշխատողների գործունեությունը շարունակել է ընթանալ ռիսկային պայմաններում՝ պայմանավորված կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածվածությամբ: Կենտրոնի աշխատողները պահպանել են անվտանգության կանոնները՝ անցնելով պահանջվող պատվաստումները, բժշկական ստուգումները և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի գրադարանը համալրվել է 222 միավոր (84 անուն) նոր գրքով, 232 միավոր պարբերական հրատարակությամբ (թերթեր, ամսագրեր և այլն) և այլն:

Ընթերցանության հանդեպ հետաքրքրության բարձրացման նպատակով՝ համալսարանի ներքին շահակիցների համար կազմակերպվել են գրքերի քննարկումներ և այլ հետաքրքրաշարժ միջոցառումներ: Կենտրոնի ընթերցարանում կազմակերպվել է ընդամենը 3 ստեղծագործության քննարկում, ինչը պայմանավորված էր ֆիզիկական հեռավորության պահպանման, մարդկային դեմ առ դեմ շփումների սահմանափակման անհրաժեշտությամբ:

2021-2022 ուստարում Կենտրոնը շարունակել է ակադեմիական խորհրդատվության ձևերի պլանավորման, կազմակերպման ու վերահսկման աշխատանքների իրագործումը։

Համալսարանի գործունեությանն աջակցող համակարգչային ու ցանցային սարքավորումների տեխնիկական սպասարկումը, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն ու աջակցումն իրականացվել և իրականացվում է Կենտրոնի տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների գործունեության շնորհիվ։

Կենտրոնի գործունեության ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների ու սպառնալիքների, ինչպես նաև՝ որոշակի հարցերի կտրվածքով լուծման ուղիների մասին առավել մանրամասն կներկայացվի հաշվետվության համապատասխան բաժիններում։

ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Կենտրոնի առաքելությունը համալսարանում համապատասխան **կրթական միջավայրի** ապահովումն է և օգտվողին միտված **որակյալ ծառայությունների մատուցումը**, որոնք բարձրացնում են **կրթության, հետազոտության որակը,** բաց տեղեկատվական-կրթական տարածությունում համալսարանի կորպորատիվ հեղինակությունը և աջակցում մարզի բնակիչների **մարդկային ռեսուրսների պահանջվածության բարձրացմանն ու հաջողակ լինելու գիտակցության ապահովմանը**:

Կենտրոնի գործունեության հիմնական **նպատակը** համալսարանի ներքին շահակիցների տեղեկատվական պահանջմունքների, գրադարանային-տեղեկատվական ռեսուրսների, ստեղծարար ու նորարարական մեթոդների միջոցով ուսումնական գործընթացի ու գիտական հետազոտությունների որակյալ աջակցումն է: Նպատակից տրամաբանորեն բխում է Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծումը:

Հարկ է նշել, որ Կենտրոնը համագործակցում է համալսարանի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների հետ: Կենտրոնը կիրառում է հաղորդակցության տարբեր միջոցներ՝ անցկացվելիք միջոցառումների վերաբերյալ համալսարանի

ֆակուլտետների, ամբիոնների աշխատողների և ուսանողների պատշաճ իրազեկվածության ապահովման համար: Եվ փոխազդեցությունների գործընթացում հնարավորության սահմաններում արժևորվում է շահակիցներից ստացվող հետադարձ կապը, որի հիման վրա պլանավորվում ու կատարվում են Կենտրոնի գործունեության որոշ ուղղությունների բարելավման աշխատանքներ:

ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Կենտրոնի կառավարումն իրականացնում է **Կենտրոնի տնօրենը**, որն **անմիջականորեն ենթարկվում է համալսարանի ռեկտորին**: Դրված խնդիրների իրագործման նպատակով՝ Կենտրոնի գործառույթները բաշխվում են համապատասխան պատասխանատուների միջև: Կենտրոնի կանոնադրության տարբերակիչ գծերից է այն, որ գործառույթները տարբերակված են՝ ըստ սուբյեկտ-պատասխանատուների:

2021-2022 ուստարվա ավարտին Կենտրոնի փաստացի աշխատողներն ինն են:

Գրադարանային գործունեությամբ փաստացի զբաղվում է հինգ աշխատող **(հինգ դրույք)**, որից մեկը պատասխանատու է ընթերցարանի գործունեության ծավալման համար, երկուսը զբաղված են փաստաթղթերի համալրման ու մշակման հարցերով, իսկ գրականության սպասարկման հարցում պատասխանատու է երկու աշխատող, որից մեկը զբաղվում է նաև տեղեկատվական-մատենագիտական սպասարկման հարցերով: Գրադարանային գործունեությանն առնչվող բոլոր գործընթացները համակարգվում են Կենտրոնի տնօրենի կողմից:

Կենտրոնի գործունեության համար առաջնահերթ է համապատասխան մասնագիտական վերապատրաստումներին աշխատողների մասնակցության ապահովման հարցը: Եվ նախընտրելի է, որ այդ վերապատրաստումները լինեն Գյումրիում կամ կազմակերպվեն առցանց ձևաչափով: Բացի մասնագիտական գիտելիքների թարմացումից, կա նաև անգլերենի, ինչպես նաև

համակարգչային գրագիտությանը միտված ներբուհական վերապատրաստումների անցկացման կարիք: Նույն լեզվաիմացության բարելավումը կխթանի մասնակցությունը արտասահմանյան գրադարանային ծրագրերին, առցանց վերապատրաստումներին:

Համալսարանում SS ոլորտին վերաբերող ցանկացած հարց կարգավորվում է Կենտրոնի երկու աշխատակցի (2 դրույք) կողմից:

Կենտրոնի 1 աշխատողի (1 դրույք) գործունեությունը վերաբերում է ակադեմիական խորհրդատվությունների համակարգմանը:

Դիտարժան է նաև Կենտրոնի աշխատողների սեռատարիքային բաշխվածությունը:

Գծապատկեր 3.1 Կենտրոնի աշխատողների սեռային բաշխվածությունը



Ստացվում է, որ իգական սեռի ներկայացուցիչների թիվը կրկնակի անգամ գերազանցում է արական սեռի ներկայացուցիչների թվին:

Ինչ վերաբերում է տարիքին, ունենք նման պատկեր:

Գծապատկեր 3.2 Կենտրոնի աշխատողների տարիքային բաշխվածությունը



Այսպիսով, Կենտրոնի աշխատողները գլխավորապես պատկանում են միջին տարիքին, և առկա պատկերը ներկայումս խնդրահարույց չէ:

ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կենտրոնը տեղակայված է համալսարանի գլխավոր մասնաշենքի 1-ին հարկի կենտրոնական տարածքում և զբաղեցնում է 505,52 մ^2 տարածք: Համալսարանի գրքաֆոնդը տեղակայված է գրադարանի փաստացի գործող 3 գրապահոցում (ընդհանուր 160.68 մ^2), ընթերցարանում (201.14 մ^2) և մասնագիտական ամբիոններում (մեծապես մասնագիտական գրականություն):

Կենտրոնի բաղակացուցիչ մասերից մասնավորապես ընթերցարանում տեղադրված է 35 աշխատող համակարգիչ ու 5 նոութբուք: Առկա համակարգչային տեխնիկան ստեղծում է նպաստավոր պայմաններ՝ էլեկտրոնային տեղեկատվության որոնման, էլեկտրոնային նյութերից օգտվելու և նոր ուսումնական նյութեր պատրաստելու համար: Համակարգիչներն ու նոութբուքերն ապահովված են համացանցով:

Նկատի ունենալով համակարգիչների բարոյական մաշվածությունը՝ համալսարանի ներքին շահակիցներն աշխատանքային գործընթացում հաճախակի բախվում են տարբեր ծրագրային խնդիրների: Համակարգչային ֆոնդի թարմացմանը զուգընթաց ոչ պակաս կարևոր է նոր սնուցման սարքերի ձեռքբերումը, որովհետև հոսանքազրկման, հոսանքի տատանումների դեպքում եղած համակարգիչների՝ շարքից դուրս գալու հավանականությունը բավականին մեծ է:

Ընթերցարանի առանձին հատվածներում ներկայացված են տարբեր մասնագիտությունների գծով թարմ պարբերական հրատարակություններ (ամսագրեր ու թերթեր), ինչպես նաև փոքր գրապահարանի վրա ցուցադրվում են նոր ստացված գրքերը:

Ընթերցարանի տարածքի վերջնամասում համալսարանի դասավանդողները, ուսանողներն իրականացնում են անհատական, խմբային աշխատանքներ։ Հարկ է ընդգծել, որ ընթերցարանի տարածքում ողջ ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար անցկացվում են դասախոսություններ։

Կենտրոնի տարածքում է տեղակայված նաև ակադեմիական խորհրդատվությունների կազմակերպման համար նախատեսված աշխատասենյակը (39մ^2)։ Աշխատասենյակը մասնակի կահավորման կարիք ունի. պրոյեկտոր և գրասենյակային 15 աթոռ։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կենտրոնի տարածքը բավականին մեծ է և այն հագեցած է նյութական ռեսուրսներով, հաճախակի են առաջ գալիս մի շարք տնտեսական բնույթի խնդիրներ, որոնք հնարավորինս կարգավորվում են բուհի ռեսուրսների (այդ թվում՝ մարդկային) շնորհիվ։

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին Կենտրոնի գրքաֆոնդը կազմված է եղել 65.167 միավոր գրականությունից, որից՝ 61.154 միավոր գիրք, 2966 միավոր պարբերական հրատարակություն ու 1047 միավոր ատենախոսության սեղմագիր:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի գրադարանային պաշարներում համալարված գրքերի պատկերն այսպիսին է՝

Անուն՝ 84

Միավոր՝ 222

Նվիրատվության կարգով ստացվել է՝

Անուն՝ 60

Միավոր՝ 98

Փոխարինման կարգով ստացվել է՝

Անուն՝ 9

Միավոր՝ 9

Աղյուսակ 5.1 Համալսարանի գրադարանային ֆոնդի համալրումը գրքերով

Հ.հ.	Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում	Համալսարանի գրադարանային պաշարները համալրած գրքերի քանակական բաշխվածությունը		Նվիրատվության կարգով ստացված գրքերի քանակական բաշխվածությունը	
		Անուն	Միավոր	Անուն	Միավոր
1.	Կենտրոն	84	208	60	98
2.	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն	1	1		
3.	Գործարարության և վարչարարության ամբիոն	1	1		
4.	Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն	1	1		
5.	Հայոց լեզվի և գրականության ամբիոն	1	1		
6.	Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն	1	1		

7.	Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն	1	1		
8.	Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոն	1	1		
9.	Արվեստի ամբիոն	1	1		
10.	Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոն	1	1		
11.	Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն	1	1		
12.	Պատմության և փիլիսոփայության ամբիոն	1	1		
13.	Մանկավարժության ամբիոն	1	1		
14.	Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն	1	1		
15.	Ռազմական ամբիոն	1	1		
	Ընդամենը՝	84	222	60	98

Ինչ վերաբերում է պարբերական հրատարակություններին, հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի գրքաֆոնդը համալրվել է 232 միավոր գրականությամբ, որից 186 միավոր հայալեզու, 33 միավոր ռուսալեզու և 13 միավոր անգլալեզու պարբերական հրատարակություն (տե՛ս հավելված 1):

Իսկ 2020-2021 ուստարում Կենտրոնի գրքաֆոնդը համալրվել է **587** միավոր պարբերական հրատարակությամբ, որից **543** միավոր հայալեզու, **39** միավոր ռուսալեզու և **5** միավոր անգլալեզու հրատարակություն:

Ստացվում է, որ 2020-2021 ուստարվա համեմատ հաշվետու ժամանակահատվածում ստացել ենք առնվազն կիսով չափ պակաս տպագիր պարբերական հրատարակություն:

Գծապատկեր 5.1 2021-2022 ուստարում համալսարանի գրադարանային ֆոնդի համալրումը պարբերական հրատարակություններով՝ ըստ լեզուների (ըստ թվաքանակի)



Նկատենք, որ ստացված պարբերական հրատարակությունների մեծ մասը հայերեն է: Միաժամանակ պետք է ընդունենք, որ համալսարանի ներքին շահակիցների համար ընթերցանության նախընտրելի լեզուն շարունակում է մնալ հայերենը: Մինչդեռ մի շարք նոր մասնագիտությունների գծով առաջատար գրականությունը անգլերենով է ու հայերեն թարգմանությունները սակավաթիվ են:

Ստացված պարբերական հրատարակությունների վերաբերյալ տեղեկատվությունն ամրագրված է գրադարանային փաստաթղթերի գրանցման քարտերի վրա:

Պարբերական հրատարակությունների կորստի երևույթները կարգավորելու համար՝ 2017-2018 ուստարվանից սկսած՝ «Պարբերական հրատարակությունների ընդունման-հանձնման գործընթացի իրականացման» մատյանում ամրագրվում է պարբերական հրատարակությունը համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը հանձնելու, Կենտրոնին ետ վերադարձնելու վերաբերյալ տեղեկատվությունը: Ամբիոնների և համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից Կենտրոնին ետ վերադարձված պարբերական հրատարակությունները տեղադրված են ընթերցարանում:

Կարևոր է ընդգծել, որ ուսանողների մասնագիտական գրականության պահանաջները բավարարելու հարցը հնարավոր է ինչ-որ չափով կարգավորել թվայնացման սարքի ձեռքբերման շնորհիվ: Այդ հարցի լուծումը նախատեսված է առաջիկա ծրագրերում:

Տպագիր մասնագիտական նոր գրականության պակասը մասամբ կարգավորվում է Կենտրոնի՝ «library.shsu.am» կայքի հավելվածում տեղադրված էլեկտրոնային գրքերի շնորհիվ: Հաշվետու ժամանակահատվածի ավարտին էլեկտրոնային գրքերի ընդհանուր թիվը կազմել է 698 գիրք: Կայքում նոր էլեկտրոնային գրքերի տեղադրման որոշման հարցում հաճախ սահմանափակող գործոն է հեղինակային իրավունքների պահպանման հարցը: Որպես այլընտրանքային լուծում՝ համապատասխան մասնագիտական ամբիոնների աշխատակազմերի և սովորողների էլեկտրոնային փոստերի հասցեներին ուղարկվել է նոր հրատարակված,

համացանցում ոչ այնքան բաց հասանելիություն ունեցող գրքերի էլեկտրոնային տարբերակներ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ուղարկված էլեկտրոնային գրքերի քանակական ցուցանիշները՝ ըստ ֆակուլտետների, ամբիոնի:

Աղյուսակ 5.2 Համալսարանի ֆակուլտետներին, ամբիոնին ուղարկված էլեկտրոնային գրքերի քանակական պատկերը

Ֆակուլտետ	Ուղարկված գրքերի քանակ
Բնագիտամաթեմատիկական	99
Սոցիալական գիտությունների և իրավունքի	75
Հումանիտար գիտությունների և արվեստի	77
Մանկավարժության	29
Ռազմական ամբիոն	8
Ընդհանուր՝	288

Տեղին է ներկայացնել այն առաջարկը, որ համալսարանի աշխատողների կողմից հրատարակված գրքերի էլեկտրոնային տարբերակը, հնարավորության դեպքում, բաց հասանելիությամբ տեղադրվի «library.shsu.am» կայքի հավելվածում՝ հեղինակային իրավունքի պահպանմամբ:

Ինչպես փաստում են թվերը, գրադարանային ֆոնդի համալրումը տպագիր գրականությամբ զգալիորեն իրականացվել է նվիրատվությունների շնորհիվ: Հասկանալի է, որ բուհի ֆինանսական վիճակի բարելավման դեպքում է միայն հնարավոր նոր գրքերի գնման գործընթացի ապահովումը: Թարմ գրականության ձեռքբերումն անհրաժեշտ է ցանկացած մասնագիտության գծով, սակայն առաջնային են նոր մասնագիտությունները (կենսատեխնոլոգիա, իրավագիտություն, սոցիոլոգիա, սոցիալական աշխատանք, զբոսաշրջություն, և այլն): Միաժամանակ պետք է ընդունենք այն օբյեկտիվ իրողությունը, որ կան մասնագիտություններ, որոնց ուղղությամբ հայալեզու գրքեր գտնելը՝ գնելու նպատակով, բավականին բարդ է: Այդ մասնագիտություններից է, օրինակ, իրավագիտությունը:

Չմոռանանք նշել, որ Կենտրոնը հաշվետու ժամանակահատվածում ստացել է ատենախոսության 34 սեղմագիր (32 անուն), որը գերազանցում է նախորդ ուստարում ստացված սեղմագրերի քանակը (28): 34 սեղմագրից 32-ը հայալեզու են, իսկ 2-ը՝ ռուսալեզու:

Բացի համալսարանի գիտական խորհրդին ներկայացվող ամենամյա հաշվետվությունից, Կենտրոնն ամեն տարի գրադարանային ելակետային ցուցանիշների կտրվածքով հաշվետվություն է ուղարկում Հայաստանի ազգային գրադարանին: Ընդ որում՝ այդ ցուցանիշները տարվա կտրվածքով են:

ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Համալսարանի գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստի № 8/5 որոշման համաձայն՝ հաստատվել է ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների եվ տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնի գրադարանից օգտվելու» կանոնները: Եթե սպասակման պատասխանատուները, ուսանողների հետ աշխատելիս, կարողանում են հիմնականում ետ ստանալ վերցված գրքերը՝ պայմանավորված իրենց ավարտական փաստաթուղթը ստանալու իրողությամբ, նույնը չենք կարող փաստել աշխատողների պարագայում: Համալսարանի աշխատողների գերակա մասը նախընտրում է ընդհանրապես ետ չվերադարձնել գրադարանից վերցված գրքերը: Կան բազմաթիվ դեպքեր, երբ աշխատողը փոխում է աշխատանքը՝ տեղափոխվելով մեկ այլ կազմակերպություն, և չի վերադարձնում իր մոտ եղած գրքերը: Առայժմ բացակայում է այն մեխանիզմը, որի շնորհիվ հնարավոր է իրականացնել վերցված գրքերի վերադարձ: Հավելենք, որ ուսանողները, որոնք տարաբնույթ պատճառներով դադարեցնում են ուսումը համալսարանում, իրենց պարագայում ևս Կենտրոնը բախվում է դժվարության: Հրամանները կա՛մ ընդհանրապես ժամանակին չեն տրամադրվում, կա՛մ էլ շատ ուշ են տրամադրվում, և այդ ուսանողները, կախված չլինելով համալսարանից, իրենց հայեցողությամբ կա՛մ վերադարձնում են, կա՛մ չեն վերադարձնում: Եղել են դեպքեր, երբ կոնտակտային տեղեկատվությունն էլ է եղել սխալ ու անհնար է դարձել անգամ կապի հաստատումը: Սրանք խնդիրներ են, որոնց լուծման ուղին այս պահին դժվար է միանշանակ նույնացնելը:

Այժմ ներկայացնենք Կենտրոնի գրադարանային ծառայություններից համալսարանի ներքին շահակիցների՝ աշխատողների և ուսանողների օգտվելու քանակական ցուցանիշները։

Կենտրոնից օգտվողների փաստացի հաճախումների քանակը կազմում է 10101 (այդ թվում՝ ընթերցարանից օգտվողների փաստացի հաճախումների թիվը՝ 4951)։

Սովորողների հաճախումների քանակը կազմում է 8897 (այդ թվում՝ ընթերցարանում ուսանողների հաճախումների քանակը՝ 4208)։ Ավելի կոնկրետ, բակալավրիատի առկա ուսուցման համակարգի ուսանողների հաճախումների քանակը կազմում է 6990, բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների հաճախումների քանակը՝ 931, մագիստրատուրայի ուսանողների հաճախումների քանակը՝ 972 ու ասպիրանտուրայում և հայցորդության համակարգում սովորող ուսանողների հաճախումների քանակը՝ 4։

Համալսարանի աշխատողների հաճախումների քանակը 1204 է։

Դիտարժան է Կենտրոնից օգտվողների փաստացի հաճախումների քանակական պատկերը վերջին հինգ ուստարիների կտրվածքով։

Աղյուսակ 6.1 Կենտրոնից օգտվողների փաստացի հաճախումների քանակը 2017-2018-ից մինչև 2021-2022 ուստարին՝ ըստ օգտվողների վիճակագրական կատեգորիաների

Հ.հ.	2017-2018 ուստարի		2018-2019 ուստարի		2019-2020 ուստարի		2020-2021 ուստարի		2021-2022 ուստարի	
	Ուսանող.	Աշխատող.	Ուսանող.	Աշխատող.	Ուսանող.	Աշխատող.	Ուսանող.	Աշխատող.	Ուսանող.	Աշխատող.
1.	10242	824	10466	1062	7634	1004	2365	554	8897	1204
	Ընդամենը՝ 11066		Ընդամենը՝ 11528		Ընդամենը՝ 8638		Ընդամենը՝ 2919		Ընդամենը՝ 10101	

Վերոնշյալ աղյուսակից երևում է, որ 2017-2018 և 2018-2019 ուստարիների համեմատ 2021-2022 ուստարվա հաճախումների ընդհանրական պատկերը դեռ զիջում է, բայց կա բարելավում 2019-2020 ու 2020-2021 ուստարիների համեմատ։ Հասկանալի է, որ թվերի նվազման հարցում որոշիչ է եղել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դերակատարումը՝ դրա հետ կապված տարաբնույթ սահմանափակումներով հանդերձ։ Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնը, պահպանելով սահմանված անվտանգության կանոնները, վերադարձել է իր բնականոն աշխատանքային գործունեությանը։

Ընթերցարանի բաց հասանելիությունը, բարեխիղճ աշխատելաոճը թույլ է տալիս հնարավորինս արդյունավետ կերպով կիրառելու եղած ռեսուրսները: Նույն 5 նոութբուքերը ոչ միայն օգտագործվել են ընթերցարանի տարածքում, այլև տրամադրվել են ուսանողներին՝ իրենց համապատասխան լսարաններում աշխատանքների ներկայացման համար:

Անցնենք Կենտրոնի համար ոչ պակաս կարևոր գրադարանային ցուցանիշի, որն է՝ գրքատացքը: Այն կազմում է 3014 (այդ թվում՝ Կենտրոնի ընթերցարանի գրքատացքը՝ 345):

Մասնավորապես ուսանողների կողմից ձևավորված գրքատացքը կազմում է 2721: Ընդ որում, բակալավրիատի առկա ուսուցման համակարգի ուսանողների կողմից ձևավորված գրքատացքը 2112 է, բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների կողմից ձևավորված գրքատացքը՝ 345, մագիստրատուրայի ուսանողների կողմից ձևավորված գրքատացքը՝ 258 և ասպիրանտուրայում և հայցորդության համակարգում սովորողների կողմից ձևավորված գրքատացքը՝ 6:

Համալսարանի աշխատողների գրքատացքը կազմում է 293:

Դիտարժան է Կենտրոնի գրքատացքի պատկերը վերջին չորս ուստարիներին:

Աղյուսակ 6.2 Կենտրոնի գրքատացքը 2017-2018-ից մինչև 2021-2022 ուստարին՝ ըստ օգտվողների վիճակագրական կատեգորիաների

Հ.հ.	2017-2018 ուստարի		2018-2019 ուստարի		2019-2020 ուստարի		2020-2021 ուստարի		2021-2022 ուստարի	
	Ուսանող.	Աշխատող.	Ուսանող.	Աշխատող.	Ուսանող.	Աշխատող.	Ուսանող.	Աշխատող.	Ուսանող.	Աշխատող.
1.	2828	226	2455	383	2175	346	903	282	2721	293
	Ընդամենը՝ 3054		Ընդամենը՝ 2838		Ընդամենը՝ 2521		Ընդամենը՝ 1185		Ընդամենը՝ 3014	

Պայմանավորված համավարակի նահանջով ու իրավական սահմանափակումների նվազեցմամբ՝ հաշվետու ժամանակահատվածում նկատելի է գրքատացքի ցուցանիշի բարելավում: Միաժամանակ, ձգտելով ավելիին՝ պետք է նշենք, որ Կենտրոնում կա նոր հրատարակված գեղարվեստական գրականության հանդեպ մեծ պահանջարկ, որի կտրվածքով մեր ռեսուրսները համեստ են: Լավ կլիներ, եթե Կենտրոնը համալրվեր նաև նոր հրատակված արժեքավոր գեղարվեստական գրքերով:

Հաշվետու ժամանահակատվածում պարբերաբար կատարվել է օգտվողների քարտերի բովանդակության ու դասավորության ստուգում: Ընթերցարանից օգտվողների սպասարկման վերաբերյալ ելակետային տեղեկատվությունն ամրագրվել է ինչպես ձեռագիր գրանցամատյանում, այնպես էլ տվյալների էլեկտրոնային բազայում:

Եվ բովանդակային այս հատվածի համար առաջնահերթություն է սպասարկման արդիականացումը, որը նախ ենթադրում է լուրջ ֆինանսական ներդրումներ և ապա գրադարանավարների ծավալուն աշխատանք: Սպասարկման արդիականացման ներքո

հասկանում ենք ընթերցողների համար ինքնուրույն սպասարկման միջավայրի ստեղծում, երբ ընթերցողն ինքն է մոտենում գրադարանային պահարանին, ընտրում իրեն անհրաժեշտ գիրքը, իսկ գրադարանավարն ուղղորդողում է, աջակցում և վերջում գիրքն էլեկտրոնային ձևաչափով ամրագրում համապատասխան օգտվողի հաշվին: Այստեղ պահանջվում է 1 մլն. դրամ արժողությամբ համապատասխան գրադարանային ծրագրի ձեռքբերում, գրադարանային նոր գրապահարանների և տեխիկական միջոցների գնում, ինչը կապահովի համապատասխան գործընթացների մեկնարկը:

ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված միջոցառումները՝ մասնավորապես գրքերի քննարկումները, երևում են shsu.am կայքի Կենտրոնի կայքէջի «Միջոցառումներ» բաժնում (http://shsu.am/entertainments-library/), որտեղ անցկացվելիք միջոցառման պոտենցիալ մասնակցի համար ստեղծված է վաղօրոք գրանցվելու հնարավորություն: Իհարկե, այդ հնարավորությունից համալսարանի ներքին շահակիցները չեն օգտվում:

Նմանատիպ միջոցառումների անցկացման գլխավոր նպատակը գրքի հանդեպ հետաքրքրության առաջացումն է, որը պետք է վերջնարդյունքում նպաստի կիրթ քաղաքացու ձևավորմանը: Միջոցառումների անցկացումը լինում է կա՛մ Կենտրոնի տնօրենի նախաձեռնությամբ, կա՛մ համալսարանի ամբիոնների, այլ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների և ուսանողների առաջարկով: Գաղափար-առաջարկի քննարկման, փոխհամաձանեցմանը հաջորդում են միջոցառման անցկացման նախապատրաստական աշխատանքները:

Աղյուսակ 7.1 2021-2022 ուստարում անցկացված միջոցառումների ցուցակ

Հ.հ.	Գրքի, հոդվածների հեղինակ	Միջոցառման անվանում	Բանախոս	Միջոցառման անցկացման ամսաթիվ
1.	Անի Միրզոյան	«Հայը» և «Երևան-Փարիզը միայն չվերթ չէ» գրքերի ներկայացում	Գրող Անի Միրզոյան	15.04.2022թ.
2.	Հայկ Ասատրյանի	Հայկ Ասատրյանի 3 հոդվածի ներկայացում-քննարկում	«ՇՊՀ» հիմնադրամի «Գործարարության և վարչարարության» ամբիոնի դոցենտ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Հրաչ Խաչատրյան	16.05.2022
3.	Ստեֆան Ցվայգ	«Երեկվա աշխարհը: Եվրոպացու հուշեր» գրքի ներկայացում-քննարկում	Պատմաբան Սանասար Թումասյան	20.07.2022

Կենտրոնի միջոցառումների վերաբերյալ հայտարարությունները վաղօրոք տարածվել են էլեկտրոնային ու տպագիր ձևաչափերով: Նկարում երևում է ժամանակակից գրող Անի Միրզոյանի գրքերի ներկայացումից հատված: Հատկանշական է, որ հանդիպման ավարտին Անի Միրզոյանն ուսանողներին նվիրեց իր գրքերից օրինակներ:

Կենտրոնի կողմից կազմակերպված ոչ ստանդարտ միջոցառումներից հիշարժան է 2021թ.-ի հոկտեմբերի 31-ին կազմակերպված «Կույր ընթերցումներ-2»-ը: Գրքի ընտրության հարցում կողմնորոշվելու համար՝ ընթերցողին տեսանելի է ամեն գրքից ընդամենը մեկ մեջբերում:

Ունեցել ենք վարպետության դաս ընթերցարանում՝ «Մանկավարժության» ամբիոնի դասախոս Շ. Ալեքսանյանի համակարգմամբ և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության առկա ուսուցման III կուրսի ուսանողների մասնակցությամբ:

Ուսումնական տարվա ընթացքում պատրաստվել են նաև թեմատիկ բացիկներ, որոնք բաժանվել են համալսարանի ուսանողներին: Պատրաստված բացիկների օրինակներից մեկը երևում է լուսանկարում:

Կենտրոնը մասնակցություն է ունեցել համալսարանի բակում անվճար գրատնակի տեղադրման աշխատանքներին։ Գրատնակից վերցվում է գիրք, որը ընթերցվում է և հետո վերադարձվում նույն կամ քաղաքում տեղադրված մեկ այլ գրատնակ։ Նախաձեռնության հեղինակը 15 տարեկան Լևոն Այլյանաքյանն էր՝ Կալիֆոռնիայից։ Նրա նպատակը աշխարհի շատ երկրներում գործող “Little Free Library”-ների մշակույթի տարածումն էր նաև Հայաստանում՝ խրախուսելով գրքերի փոխանակումը և ընթերցանությունը։

Կցանկանայի հիշատակել «100 գաղափար հայաստանի համար» նորարարական նախագծերի եվ գիտատեխնիկական մշակումների համահայկական մրցույթի մասին, որին 2021թ.-ի դեկտեմբերին մասնակցեց Կենտրոնը։ Կենտրոնը հանդես էր եկել «Սոցիոլոգահեն բուհական շրջայց. տեսնել արտասովորը սովորականում» ծրագրի ներկայացմամբ՝ անցնելով կիսաեզրափակիչ փուլ։ Կիսաեզրափակիչ փուլի համար եղել են պատրաստված պահանջվող բոլոր նյութերը, որոնք էլ ներկայացվել են Կենտրոնի տնօրենի ու խորհրդատվությունների համակարգողի կողմից։ Հանձնաժողովը հետաքրքրված էր գաղափարով, սակայն եզրափակիչ փուլ չհաջողվեց անցնել։

Վերջում նշենք, որ այս ուսումնական տարում ունեցել ենք առաջարկ՝ կապված գրքի շնորհանդես կազմակերպելու հետ։ Կենտրոնը պատրաստակամ է աջակցելու նմանատիպ միջոցառումներին։

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆԴԱՄԱԿԱՑՈՒՄԸ «ՀԹԳԱ» ՀԿ-ԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում ևս համալսարանը շարունակել է անդամակցել «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա» ՀԿ-ին, ինչն ապահովում է մի շարք էլեկտրոնային գրքերի, ամսագրերի, գրադարանային ոլորտի աշխատողների համար վերապատրաստումների հասանելիությունը:

Կենտրոնն իրականացրել է համալսարանի ներքին շահակիցների իրազեկման աշխատանքներ: Ստորև բերված աղյուսակում առանձնացվել են համալսարանին հասանելի դարձած օտարալեզու ռեսուրսներից մի քանիսը:

Աղյուսակ 8.1 «ՀԹԳԱ» ՀԿ-ին անդամակցելու արդյունքում համալսարանին հասանելի դարձած էլեկտրոնային օտարալեզու ռեսուրսների ցանկ

Հ/Հ	Ժամանակահատված	Ամսագրի/ թվային գրադարանի անվանումը	Հղում

1.	Սեպտեմբեր	Development	https://journals.biologists.com/advanced-search
2.	Սեպտեմբեր	Journal of Cell Science	https://journals.biologists.com/advanced-search
3.	Սեպտեմբեր	Journal of Experimental Biology	https://journals.biologists.com/advanced-search
4.	Դեկտեմբեր	Bentham Science	https://www.eurekaselect.com/bypublication
5.	Դեկտեմբեր	Bentham Science Publishers	https://www.ingentaconnect.com/content/ben
6.	Մայիս	Oxford University Press (EIFL)	https://docs.google.com/spreadsheets/d/1qcRmqYfnxqMJnfVQUl 2UWYIhdFOalfjt36Csgh13P8E/edit#gid=0
7.	Մայիս	Bookshare-free e-books	https://www.bookshare.org/cms/

8.	Հունիս	Taylor & Francis Journal Suggester	https://authorservices.taylorandfrancis.com/publishing-your-research/choosing-a-journal/journal-suggester/?utm_source=facebook&utm_medium=social&utm_campaign=JRA25481&utm_term=post&fbclid=IwAR1siPS82sDhvRnMwj5j6_c13qAKo_9YZM_IQnlVhkCsSb0-catnXLSZoEI
9.	Օգոստոս	The Association for Computing Machinery (ACM)	https://dl.acm.org/
10.	Ընդամենը՝ 9		

Օրինակ, վերջին հղումը բովանդակում է հարուստ գրականություն վերաբերող SS (IT) ոլորտին. տեղեկատվական տեխնոլոգիաներ, ծրագրային ապահովում, տվյալների բազայի համակարգեր, կիբերանվտանգություն, արհեստական բանականություն, ինտերնետ, շարժական և մուլտիմեդիա տեխնոլոգիաներ և այլն:

«ՀԹԳԱ» ՀԿ-ից ստացվել են նաև հղումներ, որոնք նվիրված են եղել գրադանավարների մասնագիտական վերապատրաստումներին: Դրանք եղել են մեկօրյա թեմատիկ վեբինարներ:

Հավելեմ, որ եղել են նաև աղբյուրներ, որոնցից օգտվելու դեպքում կկիրառվեր չեղչված համակարգ։ Այդ շտեմարաններից համալսարանը չի օգտվել։

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Ակադեմիական խորհրդատվությունների ծառայությունը համալսարանում ներդրվել է 2018թ.-ի օգոստոսին՝ ըստ ՇՊՀ-ում ակադեմիական խորհրդատվությունների կառավարման աշխատակարգի և սկսել է գործառնել 2018-2019 ուստարում: Ակադեմիական խորհրդատվությունների ձևերը հաշվի են առնում բուհական միջավայրում, ինչպես նաև աշխատաշուկայում պահանջված գիտելիքներն ու կարողությունները, ապահովում ուսանողների համար այլընտրանքային կրթական միջավայր: Աշխատակարգում հստակեցված են խորհրդատվությունների ձևերը, պլանավորման և իրականացման մոտեցումները, ինչպես նաև պարզաբանվում են բովանդակային որոշ դրույթներ: Խորհրդատվություններն իրականացվում են անվճար ու վճարովի հիմունքներով, անհատական ու խմբային ձևերով:

Ըստ բովանդակային ուղղվածության՝ հաշվետու ժամանակահատվածում առաջարկվել են ակադեմիական խորհրդատվության հետևյալ ձևերը՝ ա) գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություններ, բ) համակարգային կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվություններ, գ) ԿԾ-ների մասնագիտական առարկաների առանձին թեմաների արտածրագրային խորհրդատվություններ /վճարովի հիմունքներով/, դ) հետազոտական խորհրդատվություններ:

Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունները նախատեսված են համալսարանի բակալավրիատի ու մագիստրատուրայի բոլոր մասնագիտությունների գծով սովորողների համար, ովքեր գրում են կուրսային և/կամ ավարտական աշխատանք:



Նշենք, որ գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների բովանդակային կառուցվածքը մշակվել է՝ հաշվի առնելով ուսանողների համար առանցքային նշանակություն ունեցող բովանդակային հարցերը: 2018-2019 ուստարում նշված խորհրդատվության ձևին մասնակցել է տարբեր մասնագիտությունների գծով 160 ուսանող, 2019-2020 ուստարում՝ 264 ուսանող, 2020-2021 ուստարում՝ 244 ուսանող, իսկ 2021-2022 ուստարում՝ 251 ուսանող:

Աղյուսակ 9.1 2021-2022 ուստարում գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություններին փաստացի մասնակցած ուսանողների ցուցանիշները

Ֆակուլտետ/Ամբիոն	Բակալավրիատ	Մագիստրատուրա	Խորհրդատվություններին փաստացի մասնակցած ուսանողների ընդհանուր թիվը
	Խորհրդատվություններին փաստացի մասնակցած ուսանող. քանակ	Խորհրդատվություններին փաստացի մասնակցած ուսանող.	
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ	35	20	55
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ	31	21	52
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ	40	9	49
Մանկավարժության ֆակուլտետ և Ռազմական ամբիոն	52	43	95
Ընդհանուր՝	158	93	251

Ինչպես փաստում են թվերը, վերջին տարիներին գրանցվել է գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություններին ուսանողների մասնակցության աստիճանական աճ: Պետք է նշել, որ մասնակցության ցուցանիշի վրա դրական ազդեցություն է ունեցել ZOOM հարթակի կիրառումը, որը սկսվեց կորոնավիրուսային հիվանդության սկզբնական շրջանից: Եվ 2021-2022 ուստարում ևս դիմել ենք առցանց ձևաչափով խորհրդատվությունների կազմակերպմանն ու անցկացմանը:

2021-2022 ուստարում համալսարանում «Գիտահետազոտական գրագիտության» խորհրդատվությունների ակադեմիական խորհրդատուների բաց մրցույթի արդյունքում ընտրվել են հետևյալ հավակնորդները՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների.

Աղյուսակ 9.2 2021-2022 ուստարում գիտահետազոտական գրագիտության խորհրդատուների ցուցակ

№	Ակադեմիական խորհրդատուի ազգանուն, անուն, հայրանուն	Կառուցվածքային ստորաբաժանման անվանում
1.	Ադամյան Նելլի Վոլոդյայի	«Բնագիտամաթեմատիկական» ֆակուլտետ
2.	Ասոյան Լիլիթ Անտոնի	«Հումանիտար գիտությունների և արվեստի» ֆակուլտետ
3.	Կնյազյան Հայկանուշ Մաենլեսի	«Սոցիալական գիտությունների և իրավունքի» ֆակուլտետ
4.	Ավագյան Ինգա Էդուարդի	«Մանկավարժության» ֆակուլտետ, «Ռազմական» ամբիոն

Աշխատակարգում սահմանված ժամանակահատվածներում կատարվել են իրազեկման պահանջված աշխատանքները (էլեկտրոնային նամակագրություն, հայտարարություններ, հեռախոսազանգեր և այլն): Համալսարանում անցկացվել է ընդհանուր 32 ժամ տևողությամբ գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություն: Անցկացված խորհրդատվությունների ժամանակացույցին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://drive.google.com/file/d/1kczKjZJCR9tPY_aljNJLPo2dwp-wCoPO/view :



Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություններին ուսանողների բացակայությունների պատճառները որոշ դեպքերում եղել են պայմանավորված այն իրողությամբ, որ գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների անցկացման ժամանակահատվածը համընկել է ուսանողական պրակտիկայի կամ դասաժամերի հետ, ինչպես նաև եղել են դեպքեր, երբ ուսանողները ներգրավված են եղել աշխատանքային գործընթացում կամ կամավորական աշխատանքում:

Գիտական աշխատանքներում գրականության ցանկի ձևավորման և հղումների կատարման ուղեցույցը (http://shsu.am/wp-content/uploads/2019/11/Ուղեցույց-ուսանողների-համար-2017-2018-ուստարի.pdf)՝ պատրաստված 2018թ.-ին, 2021-2022 ուստարում ևս ուղարկվել է ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեներին: Միաժամանակ ուսանողներին ուղարկվել են խորհրդատուների կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային նյութերը:

Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվության նշված ձևի որակի գնահատման նպատակով՝ Կենտրոնի կողմից իրականացվել է ընթացիկ գնահատում՝ վաղօրոք մշակված գործիքի (տե՛ս **հավելված 2**) օգնությամբ: Հարցումներն իրականացվել են Google Forms-ի առցանց հարցաթերթիկների միջոցով:

Նախ հասկանանք, թե ինչպե՞ս ենք գնահատել գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունները տարբեր ֆակուլտետների և Ռազմական ամբիոնի մասնագիտությունների սովորողները:

Գծապատկեր 9.1 2021-2022 ուստարում անցկացված գիտահետազոտական գրագիտության խորհրդատվության գնահատականները 5 բալային սանդղակով (ըստ ուսանողների քանակի)



Ինչպես երևում է, հարցման մասնակիցների գերակա մասը բարձր է գնահատել անցկացված խորհրդատվությունները: Այդ մասին են փաստում նաև ստուգիչ հարցի արդյունքները, որոնք ներկայացված են ստորև բերված պատկերում:

Գծապատկեր 9.2 Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությանը մասնակցելու որոշման հարցում ընկերոջը կողմնորոշելու դիրքորոշումը (ըստ ուսանողների քանակի)



Հարցաթերթիկի վերջին բաց հարցը միտված էր խորհրդատվությունների որակի բարելավմանն ուղղված գաղափարների հստակեցմանը, որոնցով հարցման մասնակիցները կարող էին կիսվել:

Գործնական առաջարկությունների փոխարեն ուսանողներն արտահայտել են իրենց շնորհակալությունը՝ կատարված աշխատանքի համար։ Նրանք նշել են, որ խորհրդատվությունն իրենց բավարարել են։

2. Համակարգային կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվությունների շնորհիվ համալսարանի միջմասնագիտական ուսանողական թիմերը ստեղծել են ստեղծագործ գաղափար-առաջարկ։

Համակարգային կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվություններն անցկացվել են իբրև բաց միջոցառումներ, որոնց կարող էին մասնակցել ինչպես խորհրդատվության այս ձևին վաղօրոք գրանցված ուսանողները, այնպես էլ միջոցառման այլ շահակիցներ։ Ունեցել ենք խորհրդատվություն-դասախոսություններ, որոնց մասնակցել են համալսարանի արտաքին շահակիցներից։

Այժմ տեղին է ծանոթանալ ստորև բերված աղյուսակին։

Աղյուսակ 9.3 2021-2022 ուստարում անցկացված համակարգային կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվությունների ցանկ

N	Համակարգային (ընդհանրական) կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվության թեմա(ներ)	Ակադեմիական խորհրդատուի ազգանուն, անուն	Ակադեմիական խորհրդատվության անցկացման ամսաթիվ
1.	Համակարգային մտածողությունն ու համակարգային վերլուծությունը	«Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի դասախոս Թերեզա Խաչատրյան	05.11.21
2.	Գնագոյացումը և կողմնորոշվածությունը շուկային	«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ի հետազոտող	17.11.21
3.	Ինչպե՞ս խթանել, զարգացնել ստեղծագործ մտածողությունը	«Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Հայկուհի Կնյազյան	18.11.21
4.	Ժամանակի կառավարում	«Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի դասախոս Թերեզա Խաչատրյան	01.12.21
5.	Բազմամշակութայնությունն ու հանդուրժողականությունը	«Արվեստի» ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Օֆելյա Կուրազյան	09.12.21

6.	Անորոշությունն ու ռիսկերի կառավարումը	ՀՊՏՀ ԳՄ «Ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների» ամբիոնի ավագ դասախոս Ռոզա Կուրղինյան	11.12.21
7.	Գործարար մարդու արտաքին իմիջն ու վարվելաձևի դրսևորումները Գործարար հաղորդակցությունների բազային գիտելիքներ	«Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Երանուհի Մանուկյան	20.12.21
8.	Մարդու պահանջմունքները, դրդապատճառներն ու մոտիվացման միջոցները	«Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի դասախոս Վարդան Պապիկյան	20.01.22
9.	Թիմը և անհատը. փոխազդեցությունների առանձնահատկությունները: Դերերի բաշխումը թիմում:	«Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Կարինե Սահակյան	15.02.22
10.	Նախագծերի կառավարում	«Նոր Լույս» Մենթորինգ Կենտրոն Երիտասարդների համար ՀԿ-ի գործադիր տնօրեն, հոգեթերապևտ	07.04.22

		Շողիկ Միքայելյան	
11.	Ինչպե՞ս Google ձևերով անցկացնել հարցումներ	«Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիայի» ամբիոնի դասախոս Գևորգ Ասատրյան	23.05.22

Համակարգային (ընդհանրական) կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվությունների գնահատումը ևս անցկացվել է առցանց ձևաչափով՝ վաղօրոք մշակված գործիքի (տե՛ս հավելված 2) օգնությամբ:

Հարցման գործիքի հարցերից ընտրել ենք մի քանիսը՝ ընդհանրացված արդյունքների ներկայացամբ:

Հարցերից մեկը վերաբերում էր խորհրդատվությունների թեմաների ընտրությանը, որոնք առավել հետաքրքրել են իրենց: Այդ կտրվածքով ուսանողներն ունեին առավելագույնը 3 թեմա նշելու հնարավորություն: Ընդհանրացված պատկերը երևում է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 9.4 Ուսանողների կողմից արժևորված խորհրդատվություն-դասախոսությունները

Հ.հ.	**Խորհրդատվություն-դասախոսության թեմա, ակադեմիական խորհրդատու**	**Ընտրված թեմայի հաճախականություն**
1.	Ինչպե՞ս խթանել, զարգացնել ստեղծագործ մտածողությունը (Հայկուհի Կնյազյան)	17

2.	Ժամանակի կառավարում (Թերեզա Խաչատրյան)	16
3.	Համակարգային մտածողությունն ու համակարգային վերլուծությունը (Թերեզա Խաչատրյան)	11
4.	Բազմամշակութայնությունն ու հանդուրժողականությունը (Օֆելյա Կուրազյան)	14
5.	SS գործիքներ- Ինչպե՞ս Google ձևերով անցկացնել հարցումներ (Գևորգ Ասատրյան)	13
6.	Անորոշությունն ու ռիսկերի կառավարումը (Ռոզա Կուրղինյան)	9
7.	Գործարար մարդու արտաքին իմիջն ու վարվելաձևի դրսևորումները (Երանուհի Մանուկյան)	8
8.	Թիմը և անհատը. փոխազդեցությունների առանձնահատկությունները, դերերի բաշխումը թիմում (Կարինե Սահակյան)	8
9.	Հաճախորդակողմնորոշվածություն (Վարդան Պապիկյան)	8
10.	Գնագոյացումը և կողմնորոշվածությունը շուկային (Սյուզաննա Սերոբյան)	7
11.	Գործարար հաղորդակցությունների բազային գիտելիքները (Երանուհի Մանուկյան)	6

Անդրադառնանք նաև ուսանողների կողմից նշված առարկայական առաջարկություններին, որոնք թույլ կտան բարելավել մեր կատարած աշխատանքը։

2 ուսանող առաջարկել էր, որ խորհրդատվությունները կազմակերպվեին կենդանի, դեմ առ դեմ ձևաչափով՝ առցանցի փոխարեն։ Այս ուսումնական տարում այդ առաջարկությունը հաշվի է առնվել։ Եվ այն խորհրդատվությունները, որոնց գործնական մասը զգալի է, անցկացվում են դեմ առ դեմ ձևաչափով։

Եվ 1 ուսանող առաջակել էր իրենց ուղարկվող խորհրդատվություն-դասախոսության տեսանյութը տեղադրել տեսանելի վայրում։ Այս առաջարկության ուղղությամբ դեռ անհրաժեշտ է մտորել։ Այն ունի վիճահարույց կողմ։

Ցանկալի կլիներ, որ խորհրդատվության նշված ձևին համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի ներկայացուցիչներն առավել մեծ հետաքրքրություն ցուցաբերեին և փաստացի մասնակցեին իրագործման գործընթացին։

Համակարգային (ընդհանրական) կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվություն-դասախոսությունների զգալի մասի անցկացումից հետո համալսարանի 4 միջմասնագիտական ուսանողական թիմի (յուրաքանչյուրը կազմված հինգ անդամից) կողմից մշակվել է 4 ստեղծագործ գաղափար-առաջարկ։

4 գաղափար-առաջարկներն են՝

1. “Coworking space” կամ «Համատեղ աշխատանքային տարածք» «ՇՊՀ» հիմնադրամում

2. Պատրաստի՛ր և վաճառի՛ր

3. Պտտի՛ր և գովազդի՛ր

4. «Օգնություն հանուն զարգացման»

Վերոնշյալ 4 գաղափարից հատկանշական է վերջինը, որը կներկայացնենք ընդհանրական ձևով։ Խոսքը վերաբերում է համալսարանում **երեխաների խնամքի և զարգացման յուրօրինակ կենտրոնի ստեղծմանը**: Հիմնախնդիրն այն է, որ համալսարանի մի շարք աշխատողներ, ուսանողներ ունեն մինչև 6 տարեկան երեխա(ներ) և նրանցից շատերի համար բավականին դժվար է ուսման, աշխատանքի հետ մեկտեղ կազմակերպել երեխաների խնամքը և/կամ զարգացումը՝ ժամանակի սղության պատճառով։ Մինչդեռ նման կենտրոնի ստեղծումը կաջակցեր նրանց երեխաների պատշաճ խնամքի և զարգացմանն ուղղված գործունեության ծավալմանը։

Գաղափարի իրագործման հարցում համալսարանի ուժեղ կողմերից է համապատասխան մարդկային ռեսուրսների առկայությունը։ Համալսարանի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Սոցիալական մանկավարժություն», «Հոգեբանություն», «Սոցիալական աշխատանք», «Կառավարում» և մի շարք այլ մասնագիտությունների բարձր կուրսերի բարձր առաջադիմություն ունեցող սովորողները կարող են իրենց պրակտիկան և պարզապես ազատ ժամանակը կազմակերպել ու անցկացնել երեխաների խնամքի ու զարգացման կենտրոնում։ Կենտրոնը կլինի նրանց համար համապատասխան մասնագիտական փորձառության լուրջ տիրույթ։ Նշենք, որ ուսանողները բացարձակ անկախ, ինքնուրույն գործունեություն չեն ծավալելու, այլ նրանց գործողությունները համակարգվելու են համալսարանի համապատասխան դասախոս-մենթորների կողմից։

Ավելին, համալսարանի կենտրոնական մասնաշենքի բակային տարածքը և այլ նյութական ռեսուրսները կարող են օգտագործվել՝ հօգուտ գաղափարի պատշաճ իրագործման։

Նման կենտրոնը նորույթ կլինի հայաստանյան բուհերի պրակտիկայում՝ դրական անդրադառնալով կազմակերպության հեղինակության վրա։ Աշխատող-ծնողների, ուսանող-ծնողների համար նման կենտրոնի գոյությունը կբարձրացնի ուսման, աշխատանքի հանդեպ նրանց մոտիվացիան։

Հավելենք, որ Կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունները կլինեն վճարովի հիմունքներով։

Հատկանշական է, որ բոլոր մասնակիցների և առանձին թիմերի հետ անցկացվել են առցանց ու դեմ առ դեմ ձևաչափով հանդիպումներ, որոնց շնորհիվ հնարավոր է դարձել գաղափարների պատրաստումը, հնարավորության դեպքում՝ իրագործումը։

Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների անցկացման վրա ծախսվել է 80 000 ՀՀ դրամ, իսկ համակարգային (ընդհանրական) կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվություն-դասախոսությունների անցկացման վրա՝ 38 000 ՀՀ դրամ։ Խորհրդատվության 2 ձևերի վրա գումարային ծախսվել է ընդամենը 118 000 ՀՀ դրամ։

Հետազոտական խորհրդատվությունը խթանում է նույն և/կամ հարակից մասնագիտության գծով բարձր ու ցածր կուրսերի ուսանողների միջև մասնագիտական փորձի փոխանակումը, նոր կարողությունների ու հմտությունների ձևավորումը։ Հաշվետու ժամանակահատվածում, որպես հետազոտական խորհրդատու, հանդես է եկել 4 ուսանող։ Համալսարանի ուսանողներին նմանատիպ գործընթացներում ներգավելը բավականին բարդ է։ Նրանցից յուրաքանչյուրն անցկացրել է թվով 12

խորհրդատվություն։ Խորհրդատվության ավարտին, ուսանող-խորհրդատուները պարգևատրվել են վկայականներով։ Խորհրդատվությունների անցկացումն արժեքավոր է թերևս նրանով, որ ուսանողները սովորում են լսարանից դուրս, ձեռք են բերում պահանջված տեսական ու գործնական գիտելիքներ, ընդլայնում են իրենց սոցիալական ցանցը, ինչը տեղեկատվական հասարակությունում հաջողելու պայմաններից է։ Ինչ վերաբերում է վճարովի խորհրդատվություններին, դրանք առայժմ չեն գործում համալսարանում՝ պայմանավորված ուսանողների ցածր վճարունակությամբ։

Որպես խորհրդատվությունների հեռանկարային զարգացման ուղղություն՝ առաջարկվում է գործընթացում ներառել հայաստանի ու արտերկրի առաջատար մասնագետների, ովքեր կկարողանան աշխատել հեռավար ձևաչափով ու դրանք կլինեն վճարովի հիմունքներով, որի արդյունքում ֆինանսապես կշահի և՛ համալսարանը, և՛ նաև բավարարված կլինեն համապատասխան մասնագետները։

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. shsu.am կայքի թարմացումներ, սխալների ուղղում, ըստ IP-ների վիճակագրության ուսումնասիրություն, բաժինների փոփոխություններ և թարմացումներ, ընթացիկ արխիվային փաթեթների ստեղծում և ներբեռնում

2. ՇՊՀ http://elearning.shsu.am/ հեռաուսուցման կայքում թարմացվել են 2 հեռավար ուսուցման դասընթացների էլեկտրոնային ռեսուրսները («ՏՀՏ-ները մասնագիտական ոլորտում», «Ավտոմատ թեստավորման համակարգեր»), ավելացվել է շուրջ 70 նոր ուսանող

3. 2022թ. մայիսին թողարկվել է ՇՊՀ ընդունող հանձնաժողովի https://admission.shsu.am/ բազմաֆունկցիոնալ կայքը

4. Համալսարանի ամբիոնների, կենտրոնների և վարչական մասի (թվով 27) համակարգիչները փոխարինվել են նոր՝ գերիզոր HP Prodesk համակարգիչներով: Հին համակարգիչների որոշ մասը պահեստավորվել է, մնացածը նորացվել և տեղադրվել են այլ աշխատասենյակներում

5. Համալսարանի 8 աշխատակցի համար ստեղծվել է shsu.am ընդլայնումով էլեկտրոնային հասցե

6. Ընթացիկ աշխատանքներ են կատարվել համալսարանի գլխավոր և Շիրակացի փողոցի վրա գտնվող մասնաշենքերում տեղադրված ցանցային սարքավորումների հետ Switch, WiFi router

7. Թարմացվել են Բ2-4, Բ2-5, Բ2-14, Վիվասել և Աբիոնետ համակարգչային լսարանների անհատական և դյուրակիր համակարգիչների ծրագրային փաթեթները, մաքրվել են նախորդ տարիների աշխատանքային ֆայլերն ու թղթապանակները

8. Կատարվել է վարչական մասի համակարգիչների վիճակի ընթացիկ գնահատում, ծրագրային միջոցների թարմացումներ, ակտիվացումներ, հովացման համակարգերի յուղման ու մաքրման աշխատանքներ

9. Կատարվել է ընթերցասրահի համակարգիչների ծրագրային թարմացում, ինչպես նաև՝ գրասենյակային ծրագրային փաթեթների աշխատաժամանակի երկարաձգման աշխատանքներ

10.Սերվերի սպասարկման ընթացիկ աշխատանքներ (անվտանգություն, ծրագրային ապահովում, արխիվային պատճեններ):

ԿԵՆՏՐՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ, SHSU.AM ԿԱՅՔՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ

21-րդ դարի պահանջներից է ներկայացվածությունը սոցիալական մեդիայում, պաշտոնական կայքերում: Հայաստանյան իրականությունում տեղեկատվության ստացման հիմնարար աղբյուրներից է «facebook» սոցիալական ցանցը: Ըստ այդմ՝ Կենտրոնի գործունեությունը հնարավորինս լուսաբանվում է ինչպես համալսարանի պաշտոնական կայքի համապատասխան էջում՝ ըստ կառուցվածքային բաժինների, այնպես էլ «facebook» սոցիալական ցանցում: Սոցիալական ցանցում տեղադրվում են հերթական խորհրդատվությանը վերաբերող հայտարարություններն ու նորությունները, գրքի քննարկումներին և այլ համանման միջոցառումներն վերաբերող տեղեկատվությունը, նոր ստացված գրականությանը վերաբերող նյութերը և ոչ միայն:

Ներկայումս ֆեյսբուքյան էջի ընկերների թիվը հասնում է 1209-ի, որը դինամիկ տվյալ է: Նույն սոցիալական ցանցի նամակագրական կապը կենտրոնի օգտվողների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմ է: Հաճախ սոցիալական ցանցում նամակ են գրում՝ պահանջվող գրքի կամ միջոցառման հետ կապված մանրամասները ճշգրտելու նպատակով:

Թագավարակի մարտահրավերներին բախվելուց հետո Կենտրոնում ամեն տարի ստեղծվում է բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնառողների տվյալների բազա, որն ակտիվորեն կիրառվում է Կենտրոնի գործունեությանը վերաբերող

համապատասխան տեղեկատվությունն օպերատիվ կերպով տարածելու համար։ Կենտրոնում թարմացվում են նաև վարչական և պրոֆեսորադասախոսական համակազմերի տվյալների էլեկտրոնային բազաները։ Դա բավականին ժամանակատար աշխատանք է։

Հետադարձ կապի մեխանիզմեր կան նաև համալսարանի պաշտոնական կայքի Կենտրոնի էջում, որոնք, սակայն, այնքան էլ կիրառելի չեն համալսարանի ներքին շահակիցների կողմից։

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

№	Հեղինակ, վերնագիր կամ նյութի անվանումը	Գինը		Օրինակների քանակը	Գումարը	
		դրամ	լումա		դրամ	լումա
1.	Մանկավարժական համալսարան թերթ	100		12	1200	
2.	Հասկ ամսագիր	1000		5	5000	
3.	Գործք ամսագիր	4000		13	52000	
4.	Օրինականություն ամսագիր	1000		8	8000	
5.	Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ ամսագիր	1500		2	3000	
6.	Շիրակ ամսագիր	600		1	600	
7.	Շիրակ ամսագիր	2000		8	16000	
8.	Շիրակ ամսագիր	1500		10	15000	
9.	ՇՊՀ Գիտական տեղեկագիր, 2021թ., № 1, Պրակ Ա պարբեր. հրատ.	2025	54	1	2025	54
10.	ՇՊՀ Գիտական տեղեկագիր, 2021թ., № 1, Պրակ Բ պարբեր. հրատ.	2025	54	1	2025	54
11.	ՇՊՀ Գիտական տեղեկագիր, 2021թ., N2, Պրակ Ա պարբեր. հրատ.	1899	60	1	1899	60

12.	ՇՊՀ Գիտական տեղեկագիր, 2021թ., N2, Պրակ Բ պարբեր. հրատ.	4399	20	1	4399	20
13.	Զեկույցներ №2, 3, 4, 2021թ. պարբեր. հրատ.	1000		3	3000	
14.	ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», 2021թ., №2, Պրակ Ա պարբեր. հրատ.	3000		1	3000	
15.	ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», 2021թ., №2, Պրակ Բ պարբեր. հրատ.	1500		1	1500	
16.	Սահմանադրական դատարան. Տեղեկագիր պարբեր. հրատ.	500		48	24000	
17.	Հայ զինվոր պարբեր. հրատ.	200		70	14000	
18.	Burda ամսագիր	1550		12	18600	
19.	Psychologies ամսագիր	1800		4	7200	
20.	Экономический журнал ամսագիր	12000		2	24000	
21.	Армейский сборник ամսագիր	9300		6	55800	
22.	Физическая культура ամսագիր	11400		3	34200	
23.	Вопросы литературы ամսագիր	5300		3	15900	
24.	Журнал для изучающих английский язык ամսագիր	7700		3	23100	
25.	Journal of DemocracY ամսագիր	1000		1	1000	
26.	English Teaching Forum ամսագիր	500		4	2000	
27.	The Economist ամսագիր	500		1	500	
28.	Bloomberg Businessweek ամսագիր	500		1	500	

29.	E Journal USA ամսագիր	500		1	500	
30.	Highlights ամսագիր	500		1	500	
31.	Sports Illustrated ամսագիր	500		1	500	
32.	AC&U Advisory Chair ամսագիր	500		1	500	
33.	Main issues of pedagogy and psychology ամսագիր	1500		1	1500	
34.	Armenian Journal of Special Education ամսագիր	1500		1	1500	

Պարբերական հրատարակություն՝ 232

Հայերեն՝ 186

Ռուսերեն՝ 33

Անգլերեն՝ 13

Ընդամենը՝ 232 միավոր

Ընդամենը՝ 344.449 ՀՀ դրամ 88 լումա

ՀԱՎԵԼՎԱԾ 2



Հարցաթերթիկ

Հարգելի՝ ուսանող,
«ՇՊՀ»-ի «Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնի կողմից անցկացվում է հարցում, որն անանուն է, և ստացված արդյունքներն օգտագործվելու են ընդհանրացված ձևով: Ձեր անկեղծ կարծիքներն ու գնահատականները կնպաստեն ուսանողների համար մատուցվող գիտահետազոտական գրագիտության խորհրդատվության որակի բարելավմանը:

terezakhach@gmail.com (без совместного доступа)
Сменить аккаунт

* Обязательно

1. Ֆակուլտետը՝ *

- Բնագիտամաթեմատիկական
- Սոցիալական գիտությունների և իրավունքի
- Հումանիտար գիտությունների և արվեստի
- Մանկավարժության
- Ռազմական ամբիոն

2. Կրթական ծրագիրը՝ *

- բակալավրի
- մագիստրոսի

Отправить запрос

Հարցաթերթիկ

docs.google.com/forms/d/1HzgvNyu6NqY8Q3JthpHOTwcUoSUdqgTOW-SltbfwEEI/viewform?edit_requested=true

3. Գնահատե՛ք այսօրվա խորհրդատվությունը 5 բալային սանդղակով՝ *

	1	2	3	4	5	
ամենացածր	○	○	○	○	○	ամենաբարձր

4. Կմասնակցե՞ք մեկ այլ թեմայով խորհրդատվության, որը կանցկացներ այսօրվա խորհրդատուն: *

- այո
- ոչ

5. Հաջորդ անգամ այս խորհրդատվությանը Ձեր ուսանող-ընկերներին՝ *

- խորհուրդ կտայի մասնակցել ,
- խորհուրդ չէի տա:

6. Եթե ունեք հավելյալ գաղափարներ, թե ինչպե՞ս կարող ենք բարելավել այս խորհրդատվության որակը, խնդրում ենք կիսվել:

Мой ответ

Отправить

Очистить форму

Никогда не используйте формы Google для передачи паролей.

Отправить запрос

58ece5546471335....jpg

Показать все

ՀԱՎԵԼՎԱԾ 3


Հարցաթերթիկ
docs.google.com/forms/d/1Q6KQSSgq1z_TjuBW5YxvWc0AsU79b_RxoHN42j6xxMM/viewform?edit_requested=true
Հարցաթերթիկ
Հարգելի՝ ուսանող,
«Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնն անցկացնում է սոցիոլոգիական հարցում, որն անանուն է, և ստացված արդյունքներն օգտագործվելու են ընդհանրացված ձևով: Ձեր անկեղծ կարծիքներն ու գնահատականները կնպաստեն ուսանողներին մատուցվող համակարգային (ընդհանրական) կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվությունների որակի բարելավմանը:
terezakhach@gmail.com (без совместного доступа)
Сменить аккаунт
* Обязательно
Ֆակուլտետը՝ *
Բնագիտամաթեմատիկական
Հումանիտար գիտությունների և արվեստի
Մանկավարժության
Սոցիալական գիտությունների և իրավունքի
Ռազմական ամբիոն
Կրթական ծրագիրը՝ *
բակալավրի
մագիստրոսի
Отправить запрос



Հարցաթերթիկ

docs.google.com/forms/d/1Q6KQSSgq1z_TjuBW5YxvWc0AsU79b_RxoHN42j6xxMM/viewform?edit_requested=true

Ուսուցման համակարգը՝ *

- առկա
- հեռակա

Խորհրդատվություն-դասախոսությունների ո՞ր թեմաներն էին Ձեզ համար առավել հետաքրքրաշարժ (Կարող եք ընտրել առավելագույնը 3 պատասխան:) *

- Համակարգային մտածողությունն ու համակարգային վերլուծությունը
- Ինչպե՞ս խթանել, զարգացնել ստեղծագործ մտածողությունը
- Ժամանակի կառավարում
- Նախագծերի կառավարում
- Մարդու պահանջմունքները, դրդապատճառներն ու մոտիվացման միջոցները
- Գնագոյացումը և կողմնորոշվածությունը շուկային
- Թիմը և անհատը. փոխազդեցությունների առանձնահատկությունները
- Դերերի բաշխումը թիմում
- Անորոշությունն ու ռիսկերի կառավարումը
- Գործարար մարդու արտաքին իմիջն ու վարվելաձևի դրսևորումները
- Գործարար հաղորդակցությունների բազային գիտելիքները
- Բազմամշակութայնությունն ու հանդուրժողականությունը
- SS գործիքներ- գրաֆիկական խմբագրիչներ

Отправить запрос



Հարցաթերթիկ

docs.google.com/forms/d/1Q6KQSSgq1z_TjuBW5YxvWc0AsU79b_RxoHN42j6xxMM/viewform?edit_requested=true

Գնահատեք Ձեր ակտիվության աստիճանը խորհրդատվություն-դասախոսություններին *

- ցածր,
- միջին,
- բարձր:

Գնահատեք 1-5 բալային սանդղակով թիմային աշխատանքների օգտակարությունը, որտեղ 1-ը ամենացածր, իսկ 5-ը ամենաբարձր միավորն է: *

- 1
- 2
- 3
- 4
- 5

Ընդհանուր առմամբ Ձեր սպասումները համակարգային (ընդհանրական) կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվություններից՝ *

- լիովին արդարացան,
- ավելի շուտ արդարացան, քան չարդարացան,
- ավելի շուտ չարդարացան, քան արդարացան,
- ընդհանրապես չարդարացան:

Եթե ունեք առաջարկություններ, որոնք կօգնեն բարելավել համակարգային կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված խորհրդատվությունների որակը, խնդրում ենք կիսվել մեզ հետ: *

Мой ответ

Отправить

Очистить форму

Никогда не используйте формы Google для передачи паролей.

Компания Google не имеет никакого отношения к этому контенту. Сообщение о нарушении - Условия использования - Политика конфиденциальности

Отправить запрос